ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

«26» 12 2024 թ. N 258-Հ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի ԹԻՎ 135-Լ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հանձնարարում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 25-ի «Հանրային քրեական հետապնդման ենթակա անձը հայտնի չլինելու դեպքերով, ինչպես նաև հանրային քրեական հետապնդման ժամկետները կասեցված քրեական վարույթների նախաքննությունը կազմակերպելու մասին» թիվ 135-Լ հանձնարարականի 1-ին կետի 4.2-րդ և 5-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.2) ստորաբաժանման պետի կողմից տեղեկանքը վերահաստատելուց (կամ հաստատելուց) հետո՝ անհրաժեշտ ապացուցողական և վարութային գործողությունները կատարված և հանրային քրեական հետապնդման ենթակա անձը հայտնի չլինելու դեպքերով քրեական վարույթները (տեղեկանքներով) հաշվառել համապատասխան ստորաբաժանումում՝ որպես հանրային քրեական հետապնդման ենթակա անձը

չհայտնաբերված քրեական վարույթներ և ստուգման նպատակով ներկայացնել հսկող դատախազին.

5) սույն կետի 4.2-րդ ենթակետի համաձայն հաշվառված քրեական վարույթը հսկող դատախազի կողմից հանձնարարությամբ վերադարձվելու դեպքում՝ հանել հաշվառումից և համարել որպես ընթացիկ վարույթ.»:

2. Սույն հանձնարարականն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ